

Հայոց կոանարկուսիներն եւ նման գործերէն հարուստութիւնները, այս կարգի սովորութիւններէն են: Ունէին նաեւ Հայք կրակավառութիւն, որ այժմ Տեառնընդառաջի ասօնին կը կատարուի: Պետարարկա 1330ին երբ կը գտնուէր Կէօլը, տեսաւ, թէ ինչպէս երբ կը գտնուէր Կէօլը, տեսաւ, թէ ինչպէս Յունիս 24ի զիշերը գերման կանայք եւ աղջիկներ Հոննոս կ'երթային եւ իրենց բազուկները կը լուսային գետին մէջ¹⁴: Այս սովորութիւնը կը յիշեցնէ Համբարձման տօնի հայ ժողովրդական նմանօրինակ սովորոյթները: Առանց տարակուսի ծիսահանութեան սովորութիւնը կ'ակնարկէ հին երգին մնացորդը:

Ո՛ր տայր ինձ զձուիս ծխանի
եւ դառաւուն նաւասարդի,
Զվազելն եղանց
եւ զվա(ր)դել եղջերուաց.
Մեք փող հարուաք
եւ (դ)թմբկի հարկանէաք¹⁵:

Հ. Ն. ԱԿԵՆԵԱՆ

ՆՈՐ ԿՏՈՎԵՐԸՆԻ ԳՐԶԵՐՈՒ ԿԱՐԳԸ ՀՈՅՈՑ ԳՈՎ

(Շարունակութիւն):

11. Անհատականներու կողմանէ կազմուած ցուցակներուն մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի է Անանիա Շիրակացոյ «Թիւք որչափութեան տանց Հին եւ Նոր Կտակարանաց» աշխատասիրութիւնը: Հ. Պ. Ֆէրճաթեան²⁸ շատ գեղեցիկ կերպով կը համեմատէ այս ցուցակը Նիկեփորոս Պատրիարքի (806—816) ընծայուած տնաչափական (stichometrie) ցուցակին հետ, եւ կը յանդի այն եղրակացութեան, թէ Շիրակացոյն ու Նիկեփորոս օգտուած են հասարակաց աղբիւրէ մը: Մենք նկատի առնելով զրուածքիս միայն Նոր Կտակարանի ցանկը, ամէն բանով համաձայն կը գտնենք զայն Ձօհրապի ցանկին հետ: Շիրակացոյ այս ցուցակին մէջ Յայտնութեան գրքի ներկայութիւնը միայն կասկածելի է, զոր յետա-

¹⁴ Հմտ. Heuser, Volkstümliche Feste und volkstümliche Gebräuche: Wetzler und Welte's Kirchenlexikon, 2. Aufl. IV (Freiburg in B. 1886) էջ 148—149:

¹⁵ Գրեգոր Մաղխարոսի թղթերը. հրատ. Կ. Կոստանտնուպոլիս, Աղեքաանդրապոլ, 1910, էջ 87:

²⁸ Անանիա Շիրակացոյ անուիւ կ'էջերէն. Հանդէս Ամսօրեաց, 1908, էջ 20:

դայ գրչագիրներէն ներմուծում կը համարինք: Տնահամարներու ընդհանուր գումարը՝ ԱՓՇՂԱ. (= 18591) եթէ հաստատուն տուեալ ընդունելու ըլլանք, մեզ չեն գոհացնէր ո՛չ Հ. Պ. Ֆէրճաթեանի հրատարակած ցուցակին տնահամարներու թիւերը եւ ո՛չ Պրոֆ. Ա. Արրահամեանի քննական հրատարակութիւնը²⁹: Հ. Ֆէրճաթեանի յառաջ բերած օրինակին մէջ տնահամարներու գումարն է փոխանակ սպասուած 18591ի՝ 18584, իսկ Պրոֆ. Արրահամեանի քով 18698: Հ. Ֆէրճաթեանի հաշիւին մէջ կայ անուշագրութեան պակաս մը, որով նա «Կաթողիկէթ թուխաք է» խորագիր-պարբերութեան է թուանշանը իբրեւ տնաչափ անուշալով՝ ներմուծած է հաշիւին մէջ, որով 18584 + 7 = 18591 թիւը կը հանէ: Այս եօթը թիւի տարբերութիւնը հաւասարելու համար կ'առաջարկենք Փիլիմոնի թղթին իՍ.Ր. ուղղել էջմիածնի թ. 154 (Կարենեան) ձեռագրի համաձայն իՍԸ.Ի: Այս փոքր սրբագրութեամբ կը ճշգրտուի ամբողջ համագումարը եւ կ'ունենանք իրապէս ԱՓՇՂԱ. (= 18591):

ՆՈՐԻՆ (Անանիա Շիրակացոյ) ԹԻԻՓ ՈՐԶԱ-
ՓՈՒԹԵԱՆՑ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ԱԿԵՆԵԱՆՑՆ Դ:

Մատթէոսի տունը	ՍՈ:
Մարկոսի	ՌՈ:
Ղուկասու	ՍՊ:
Յովհաննու	ՍԵ:
Գործի Առաքելոց	ՍՊ:

ԿԱՌՈՂԻԿԵՔ ԹՈՒՂԹՔ Է:

Յակոբու թղթին	տունը	Յ:
Պետրոսի Ա. թղթին	"	Յ (Ժ) ³⁰
" Բ. թղթին	"	Մ:
Յովհաննու Ա. թղթին	"	ՄԿ:
" Բ. թղթին	"	ՄԶ:
" Գ. թղթին	"	ԼԵ:
Յուդայի թղթին	"	ԿԸ:

[Յայտնութեան Յովհաննու Ն]
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ ԹՈՒՂԹՔ ԴԺ (ԺԳ):

Հոովմայեցոց թղթին	տունը	ՋԾ:
Կորնթացոց Ա. թղթին	"	ՊԽԲ:
Երկրորդ թղթին	"	Ո:
Գաղատացոց թղթին	"	ՅԺԲ:
Եփեսացոց թղթին	"	ՅԺԲ:
Փիլիպեցոց թղթին	"	Մ:
Կողոսացոց թղթին	"	Յ:
Թեսաղոնիկեցոց թղթին	"	ՅԺԲ:

²⁹ Շիրակացոյ Մատեհագրութիւնը: Երևան 1944, էջ 257—259:

³⁰ Փակագծի մէջ առնուածները Պրոֆ. Արրահամեանի հրատարակութեան են:

Նորին Բ. թղթին	տունը	ձԾ:
Երրայեցոց	"	ՁԾ:
Տիմոթեայ Ա. թղթին	"	ՄԻ:
Նորին Բ. թղթին	"	ձԶ:
Տիմոթի թղթին	"	ՂԶ: (ՂԳ)
Փիլիմոնի թղթին	"	ԽԸ:

Համանդամայն Նորոց Կտակարանաց տունը այս էն՝ ԱՓՇՂԱ:

Պրոֆ. Արրահամեանի ցուցակը, զոր նա Շիրակացոյ վաւերական օրինակը կը համարի, մեր համոզումով՝ խանգարուած է: Այս կը տեսնուի Անանիա Շիրակացոյ ցուցակին վերջաւորութեանէն. «Համանդամայն Նորոց Կտակարանաց տունը այս էն ԱՓՇՂԱ»: Բոլոր ձեռագիրներու մէջ անփոփոխ պահուած է այս թիւը. թէեւ տուներու հաշուին մէջ տարբերութիւն ունին: Նոյն իսկ դասագրքերու մէջ մուտ գտած³¹:

Անոնք, որ փոփոխութիւն մուծած են բնագրի մէջ, չհակասելու համար այդ թուին, աշխատած են միւս գրքերու տնահամարներու թիւը նուազեցնել: Ասոր մէկ իրապէս դասական օրինակը կը ներկայացնէ Ա. Արրահամեանի բնագիրը, ուր Պետրոսի Ա. թղթին տնաչափերը զոհ են դացած Յայտնութեան. որովհետեւ մինչ Պետրոսի Բ. թուղթը որ առաջին թղթի ծաւալին կէսն է, ունի «տունը Մ», իսկ Ա. թուղթը կը ստանայ միայն «տունը Ժ»: Այս խորհրդածութիւններէն կը հետեւի թէ Անանիա Շիրակացոյ բնագրին մէջ սկզբնաբար չկար Յայտնութիւնը համաձայն էջմիածնի թիւ 154 (Կարենեան) ձեռագրին³². ապա անցած է ան առանց տնահամարի, ինչպէս մեր Մատեհագրարանի թիւ 30³³, որուն վրայէն կը հրատարակէ Հ. Պ. Ֆէրճաթեան, իսկ արմենապիւրը յատկացուած են տնահամարներ, ի հաշիւ միւս տնահամարներուն, ինչպէս ունին ՀԱՍՌ Մատեհագրարանի թիւ 2180 եւ 699 ձեռագիրները:

12. ԺԱ. դարու ցուցակագիրներէն ծանօթ է Գեորգ վարդապետ «Կաղն» կոչեցեալ: Մեծ Հ. Ն. Ակինեան իր ընտելական աղնուութեամբն մեր ուշագրութիւնը հրատարակեց այս ցուցակին վրայ եւ տրամադրեց մեզ այս մասին իր հաւաքած նիւթերը, որուն համար մասնաւոր շնորհակալութիւն

³¹ Գեորգ Հարցմանց Գրեգորի Տաթևացոյ: Կ. Պոլիս 1729, էջ 451. «Եւ Նոր Կտակարանն ամենայն՝ էն տունը՝ ԱՓ. ՇՂԱ»: Հմտ. Ժողով Բ. Անտիոքայ Միանդամայն Նորոց Կտակարանաց տունն ԱՓՇՂԱ:

³² Ֆէրճաթեան, անդ, ծանօթ. 16:

³³ Տաշեան, Յուցակ, էջ 174:

կը պարտիմ Մեծ. Հօր: էջմիածնի ձեռագրատան թիւ 1320 ձեռագիրը ունի այս խորագիրը. «Գեորգայ Մեծի գիտնականի Կաղն կոչեցելոյ յաղագս շարակարգութեան ԺԳ. թղթոցն Պաւղոսի առաքելոյ³⁴»: Այս գրութիւնը դժբախտաբար ամբողջութեամբ չունինք մեր առջեւ, բայց կարողացանք գտնել ուրիշ կարեւոր աղբիւր մը, որ յայնօրէն օգտագործած է Գեորգայ այս Մեկնութիւնը: Այս աղբիւրն է Արասայ օրդի Գրեգորի Պատճառաց գիրքը, որուն պիտի անդրադառնանք քիչ յետոյ: Գրեգոր ունի այսպիսի յիշատակութիւն մը. «Դարձեալ տեսցուք եւ զկարգ թղթոցն թէ որպէս գրեցան, զոր ցուցանէ Գեորգ Կաղն կոչեցեալ» (Ձեռ. 47, թղ. 162ա): Այս խորագրին յաջորդող պարբերութիւնը չենք գիտեր թէ Գեորգ Կաղն բնագրէն է հանուած կամ թէ քաղուածոյք մըն է միայն անկէ: Գեորգայ վերայիշեալ ձեռագրէն Հ. Ն. Ակինեանի նշանակած մի քանի տողերու համեմատութիւնը Գրեգորի բնագրին հետ, շատ հաւանական կ'ընծայէ այն կարծիքը, թէ այդ պարբերութիւնը իսկական Գեորգի գործն ըլլայ: Գեորգ այս ցուցակը կազմած է թղթերու գրութեան ժամանակագրական կարգովը: Կոչումները, որոնք կը գործածուին դասաւորումին համար, առնուած են ինքնին թղթերու մէջ եղած վկայութիւններէն:

ԳԵՈՐԳ ԿԱՂՆ ԿԱՐԳՆ Է

Առ. Թեսաղոնիկեցիս Ա.	Առ. Տիմոս
" Կորնթացիս Ա.	" Գաղատացիս
" Կորնթացիս Բ.	" Եփեսացիս
" Լոովմայեցիս	" Փիլիմոն
" Երրայեցիս	" Կողոսացիս
" Տիմոթէոս Ա.	" Փիլիպեցիս
	" Տիմոթէոս Բ.

Գեորգ Կաղն թէպէտ կը լռէ իր աղբիւրը, բայց յայտնի է, թէ Ոսկերեանի Հոովմայեցոց թղթին մեկնութիւնն է այն (տե՛ս թ. 10): Գեորգի ցուցակը Ոսկերեանէն կը տարբերի անով միայն, որ Ոսկերեան Երրայեցոց թղթէն յառաջ կը կարգէ Տիմոթէոսի Ա. թուղթը:

13. Միսիքար Այրիվանցի իր ժամանակագրական պատմութեան մէջ (էջ 33)³⁵ ունի Նոր Կտակարանի գրքերու ցուցակ մը:

³⁴ Հ. Ն. Ակինեան, Պատմութիւն Հայ Մատեհագրութեան, անտիպ:

³⁵ Հրատ. Ք. Պատկանեան: Աւելի կանուխ է Մկրտիչ Էմիլի հրատարակութիւնը, Մոսկուա 1860ին, ուր դուրս բողոսած է այս ցանկը «բանդի խառն ի խառն յառաջ բերեալ էին ի մերում գրչագիր օրինակի», էջ 22:

15. Միթար Այրիվանցիէն հասած է մինչեւ մեր ժամանակը իր իսկազիր ձառնորդը⁴⁴, որ կը բովանդակէ նաև Նոր Կտակարանի Գիրքերը: Ծառնորդն ունի ցուցակ մը, որ զետեղուած է գլխաւոր յիշատակարանէն⁴⁵ յետոյ, զոր կարելի է ձեռագրի ընդհանուր ցուցակը համարել: Այս ցուցակին խորագիրը թէպէտ շատ մեծ նմանութիւն ցոյց կու տայ Այրիվանցեոյ ժամանակագրական պատմութեան մէջ յիշուած եւ Սարկաւազի ընծայուած ցուցակի խորագրին հետ, սակայն Պողոս Առաքելի թղթերու դասաւորութիւնը չի հետեւիր հոս Սարկաւազի կարգին, այլ Կղեմայ (Ժամ.: էջ 34): ասկէ կը տեսնուի թէ ժամանակագրութեան մէջ յառաջ բերուած Սարկաւազի ցանկը, դոնէ ըստ հակառակ, Սարկաւազի «Կարգաւորութիւն»ներէն անուած է:

Ծառնորդի եւ յիշատակարան-ցուցակի Գրքերու դասաւորութիւնը կը համընթանայ Չոհրապի հետ, դուրս հանելով միայն Աւետարաններու կարգը իրարու մէջ, որ զրուած է ըստ Սարկաւազի. Յովհաննէս Մատթէոս, Մարկոս, Դուկաս:

16. Գրիգոր Տաբեւացի⁴⁶ իր «Հարցմանց գիրք»ի մէջ Հին Կտակարանի ցուցակի կողքին ունի այս. «Իսկ Նոր Կտակըն յայտնի են, չորս գլուխ. Մատթէոս, Մարկոս, Դուկաս, Յոհաննէս, Տեսիլն Յոհաննու եւ Ննջուսն՝ էր ընդ եղբարսն, Գործք եւ է թուղթք Կաթողիկէք, որոց առաջինն Յակոբայ, երկու Պետրոսի, երեք Յոհաննու եւ Յուզայի վերջին որ լինի ժԳ: Եւ չորեքտասան թուղթք Պողոսի որ լինի ժԲ, որոց առաջինն Հոսովայեցեոց...⁴⁷ Եւ երրորդ թուղթ Կորնթացեոց, եւ Թադէոսի որ լինի է»: Այս ցուցակը կը մատնէ իր աղբիւրը յաջորդ «Հարց»ին մէջ. «Քանի՞ տուն է Աստուածաշունչ Գիրքն ամենայն». որուն կը պատասխանէ՝ «Մ՛ՓՇՂԱ» (= Անանիա Շիրակացի, տես վերը): Յուցակիս մէջ մասնա-

ւորապէս աչքի կը զարնէ «եւ Թադէոսի» յաւելուածը զոր ընդգծեցինք: Չենք զիտեր թէ ինչ կ'ահնարուի ասով: Հանդիպած ենք վկայութիւններու ուր Յուզայի կաթողիկէ թուղթը «Թուղթ Թադէոսի Առաքելոյ»⁴⁸ կ'անուանուի, բայց հոս ասոր մասին չէ խօսքը, որովհետեւ կանխապէս յիշուած էր արդէն Յուզայի թուղթը: Թադէոսի անունով ունինք ուրիշ երեք հասածներ. 1. Կանոնք Թադէի Առաքելոյ⁴⁹, 2. Սուրբ Առաքելոցն Թադէոսի յաղագս առաջին Գիտի սուրբ Սաշին⁵⁰, 3. Սրբոյն Թադէի Առաքելոցն վասն յարութեան մեռելոց⁵¹: Թադէոսի ընծայուած այս գրութիւններէն հաւանորէն առաջինին մասին է հոս ակնարկութիւնը, որովհետեւ Ստեփանոս Չիք⁵² այսպիսի վկայութիւն մ'ունի իր չափական ստանաւոր ցուցակին մէջ.

«Գիրք Յակոբայ որք կարգեցան թադէոսին կանոնական»:

17. Առաքել Սիւնեցի⁵³ Նոր Կտակարանի Գրքերը կը հաշուէ միայն ԻԲ, այս կարգով.

«Նախ չորս գլուխ Աւետարան, Ու Թուղթք Պողոսի չորեքասան, Առաքելոց Գործք որ զրեցան Ու Կաթողիկէքն ամենեքեան: Այլ եւ Տեսիլն Յովհաննու, Որ յայտնեցաւ նրմա յԱստուած, էր ընդ եղբարսն՝ յաւուրն մահու Որ զըրեցաւ ի Յովհաննու»:

Չենք զիտեր թէ Առաքել Սիւնեցին ի՞նչ հիմ ունի իր այս ցանկին համար, բայց ստույգ է թէ ան հայ ցուցակէ մը չէ որ կ'օգտուի, որովհետեւ իր դասաւորութիւնը եղած է այն կարգով որ կը տիրէր ժԳ. դա-

⁴⁸ Հմմտ. Աղարիա Կաթողիկոսի հաւատոյ Գաւանութիւնը առ Գրեգոր ժԳ. Քահանայապետ, հրատ. Պալճեան Հ. Ա., Պատմութիւն Կաթողիկէ վարդապետութեան ի Հայո: Վիեննա 1878, էջ 302:
⁴⁹ Տաշեան Հ. Յ., Վարդապետութիւն Առաքելոց անվանեցական Կանոնաց Մատենաբ, թուղթ Յակոբայ առ Կորնթոսս եւ Կանոնք Թադէի, Վիեննա 1896, էջ 392: Հմմտ. նաև Հ. Հ. Կեօրեան, Canones Apostolorum, I.
⁵⁰ Կարուրեայ գիւնապիք զվրի եղևիոյ Թուղթ Արգարու, Վենետիկ 1868, Յաւելուած, էջ 62: Թանգարան Հայկական Հին եւ Նոր Գրքութեանց, Հատոր Գ., Անկանոն Գիրք Առաքելականք: Վենետիկ 1904, էջ 453:
⁵¹ Թանգարան, անդ, էջ 462:
⁵² Լալայեան, Յուցակ Հայերէն Ձեռագրաց Վաստակարանի, Թիֆլիս 1915, Աստուածաշունչ Կարոց Անագատի Թի. Գ. յիշատակարան, էջ 19:
⁵³ Հ. Մ. Պատուրեան, Առաքել Սիւնեցի եւ իր գերթուածները, Վենետիկ 1914, էջ 197:

⁴⁴ Հմմտ. Հ. Յ. Տաշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Վիեննայի Միթթարեան Մատենադարանին, Թ. 217, էջ 548: Հ. Գալեմբարեան, Միթթար Այրիվանցի եւ իր նորագիւտ գրութիւնը, Հանդէս Ամսօրեայ 1891, էջ 164, գրութեան տարին կը զետեղէ 1272-1286 շրջանին մէջ: Հմմտ. Գարեգին Աբբ. Յովսէփեան. Խաղարակներ կամ Պոռչեանք Հայոց Պատմութեան մէջ Բ. Մաս. Երուսաղէմ 1944 էջ 106: Պատմութեան մէջ Բ. Մաս. Երուսաղէմ 1944 էջ 106:
⁴⁵ Հ. Ն. Ակիւնեան, Այս. անդ: Հմմտ. Գարեգին Աբբ. Յովսէփեան, Միթթար Այրիվանցի, Նորագիւտ Արձանագրութիւն եւ Երկեր. Երուսաղէմ 1931, էջ 15:
⁴⁶ Հմմտ. ծանոթ. 31:
⁴⁷ Կը յաջորդեն Չոհրապի կարգով:

րուն լատին Vulgataի ձեռագրերներուն մէջ⁵⁴: Ուրիշ կերպով չի մեկնուիր Պողոս Առաքելի թղթերուն Գործք առաքելոցէն յառաջ դասուելը: Արեւմտեան ազդեցութեամբ հետք մը: Չենք կարծեր թէ Առաքել ստանաւորի յանգիւրը յարմարցնելու համար կատարած ըլլայ այս փոփոխութիւնը: Յայտնի է անոր ճարտարութիւնը տաղաչափութեան արուեստին մէջ:

18. Նորագոյն աղբիւրներէն կարելի է համարել Ստեփանոս Չիք⁵⁵: Իր կարգը Չոհրապէն կը տարբերի միայն այն կէտին մէջ որ Յայտնութիւնն ու Հանդիսոր անցած է Գործք Առաքելոցէն ետք ինչպէս նաև Պողոսի Կաթողիկէ թղթերէն յառաջ:

Այս դասաւորութիւնն ալ լատինական ազդեցութիւն ցոյց կու տայ⁵⁶:

19. ձառոցը շատ լաւ ծառայութիւն կարող էր մատուցանել մեր այս ուսումնասիրութեան, բայց դժբախտաբար մեր եկեղեցական Մատենաները բացի Պատարագամտոյցէն եւ մասամբ նաև Մաշտոցէն, շատ քիչ քննութեան առարկայ եղած են բանասէրներուն: Ծառոցը, որուն մէջ Նոր Կտակարանի գրքերը, բացի Յայտնութեանց, ամբողջապէս կը կարգացուին, երկու տեսակ է. Հինը կամ Երուսաղէմեան օրինակը եւ նորը կամ Վկայասիրի ձառոց կոչուածը: Ընդհանուր յօրինուածութիւնը նոյն է երկուքին մէջ ալ եւ կը ցուցնեն յունական շատ զօրաւոր դրոշմ: Երբ նկատենք հոս Ս. Գրոց ընթերցուածները առանց անդրադառնալու ձառոցի յարակից ժամերգութեան կարգաւորութիւններուն, շատ զիւրաւ սխալ եղբարկացութիւններու կրնանք առաջնորդուիլ: Խրատագիրներու համաձայն Ս. Պատարագի արարողութիւնները միշտ նկատուելու ենք իրբեւ միջնօդակ իններորդ ժամու եւ Երեկոյեանի միջեւ:

Եկեղեցական պաշտամունքի տարին կարելի է բաժնել ընթերցուածներու վրայէն երեք գլխաւոր շրջաններու. Ա. Յիսնեկաց (Չատկէն-Պենտեկոստէ), Բ. Մեծ շրջան (Պենտեկոստէն-Բուն բարեկենդան) Գ. Քահանայորդաց (Բուն բարեկենդանէն-Չատիկ): Յիսնեկաց շրջանին կը կարգացուին ամբողջ Գործք Առաքելոցը, Կաթողիկէ թղթերը, եւ

⁵⁴ Zahn, Geschichte, I, էջ 383, ծան. 4:
⁵⁵ Հմմտ. ծան. 52, տե՛ս Հ. Ն. Ակիւնեան, Հանդէս Ամսօրեայ, 1947:
⁵⁶ Vulgata ունի նախ Պողոսի թղթերը, ապա կու դան Կաթողիկէսը:

չորս Աւետարանները: Վերջիններս այս կարգով. Մատթէոս եւ Մարկոս Երեկոյեան ժամուն. առաջինը՝ սկիզբը, իսկ երկրորդը իրբեւ արձակման Աւետարան, Դուկաս՝ Առաւօտեան ժամուն արձակման, Յովհաննէս՝ ձառու Պատարագին: Այս բաժանմունքները շատ մեծ հնութիւն ունին, որովհետեւ նոյնը կը տեսնենք ձեռագիր աւետարաններու մէջ, ուր իւրաքանչիւր Աւետարան բաժնուած է այս կօթը շարժական շրջանի վրայ բը—էէ (= բ. Երկուշարթի Չատիկի միջեւ է. Շարթ Չատիկի):

Մեծ շրջանը ունի Պողոսի թղթերը եւ չորս Աւետարանները Չոհրապեան կարգով: Այս մեծ շրջանը կը տարբերի միւս երկու շրջաններէն անով, որ միայն կիրակի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը անուած են կարգին մէջ, մինչ միւս օրերը որ սրբոց յիշատակութիւն ունին, յատուկ ընթերցուածներով օժտուած են:

Քահանայորդաց Պահոց շրջանը կը ներկայէ Կաթողիկէ թղթերը, իսկ չորս Աւետարանները կը կարգացուին միայն քաղուածաբար, պահելով իրենց Մատթէոս, Մարկոս, Դուկաս եւ Յովհաննէս յաջորդութիւնը:

20. Կարելի էր յիշել նաև երկու ուրիշ ցուցակներ ալ. առաջինը, զոր կը գտնենք Աղարիա Կաթողիկոսի Հաւատոյ դաւանութեան մէջ, որ ուղղուած է առ Գրեգոր ժԳ. Քահանայապետը⁵⁷, եւ Եպիսկոպոսական ձեռնադրութեան արարողութեան Հանդէսնակը⁵⁸: Առաջինը գուտ լատինական Vulgataի սյուսուան կարգն է, կը շեղի միայն Կաթողիկէ թղթերու ցուցակով՝ Պետրոս, Յովհաննէս, Յակոբ, Յուզա-Թադէոս. իսկ երկրորդը նոյնին ժԳ. գարու դասաւորութեամբ, ինչպէս գործածած է նաև Առաքել Սիւնեցի:

(Շարունակելի): Հ. Օ. ՍԵՔՈՒՎԱՅ

⁵⁷ Հմմտ. ծան. 48:
⁵⁸ H. Denzinger, Ritus Orientalium. Wirceburgi 1863, էջ 360: